

Fondateur


M. Mamourian

Directeur - Rédacteur en chef

H. MAMOURIAN

ARÉVÉLIAN MAMOUL,
JOURNAL ARMÉNIEN
QUOTIDIEN

100 ՓԱՐԱ



ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

100 ՓԱՐԱ

ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆԻ ՄԸ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Եթէ կայ Հայոցս Համար միտնարական երևոյթ մը, այն ալ մեր գտարին ստացած համաշխարհային հռչակն է, որով ամեն կողմ, թէ հին աշխարհին, թէ նոր աշխարհին և թէ հեռաւոր Արևելքի մէջ, անով կ'հետաքրքրուին և այսօր չենք կարծեր որ գտնուի քաղաքակիրթ ազգ մը, որ տեղեակ չըլլայ Հայկական տառապանքին ու հարստահարութեանց և հետաքրքրուի անոր համար Համա-ժողովին ընկրկը տնօրինութիւններուն:

Կերպով մը Հայկական Դատն, մեր գտնն ըլլալէ զազրած է, և եղած է համազգային գառ մը, որու ինսպատ կ'արտայայտուին բոլոր կառավարութեանց խորհրդարանները, դահլիճներ և ժողովրդային ձեռնհաս և իրազեկ շրջանակները:

Ձեռք կրնար ուրանալ թէ՛ Բարիքի Հայ Պատուիրակութիւնը, Ամերիկա-հայութեան բարեկամներ մարմիններն անմասն կ'մնան այս յաջողութիւններէն: Բնականաբար բարեկամներ այնքան զօրեղ չպիտի ըլլար եթէ մեր գառը ինքնին արդար ու իրաւունքի վրայ հիմնուած գառ մը չըլլար:

Մեր երեկուան լուրերու բաժնին մէջ անշատաբար հրատարակած էինք անգլիական հասարակաց խորհրդարանին մէջ ինսպատ Հայոց եղած հարցապնդումն և կառավարութեան կողմէ արուած պատասխանը, որ զմեզ անգամ մըն ալ իրենց կողքին կուտող զաշնակիցներ կ'անուանէր և մեր պաշտպանութիւնը կ'ինչորուէր զմեզ շրջապատող թշնամի տարրերու դէմ:

Քաղաքակիրթ ազգերու գրեթէ բոլոր խորհրդարաններու տարեգրութեանց մէջ պիտի գտնէինք մեզի հանդէպ համակրական արտայայտութիւններ և մեր գառին յաջողութեան համար ի գործ դրուած աշխատութիւններ, որոնք անկարելի է որ ամբողջական գառապարտուի:

Սարմար կ'դատենք ստորև հրատարակել, զեռ վերջերս ամերիկեան ծերակուտական մը Սր. Ուելլըմ Բիւնկի կողմէ գրուած նամակ մը, որ ուղղուած է Մ. Նահանգներու մէջ տարբերէի ի վեր բնակութիւն հաստատած հայ ազգայինի մը, Վ. Տ. Ք. Թահթապուրուհեանի, որու ի վերջերս կ'ընդունար մեր արամազրութեան տակ դրուած այդ նամակը:

Ինչպէս պիտի կարգան մեր ընթերցողներն կ'ընկնէ թէ՛ Պ. Թահթապուրուհեան Սր. Ուելլըմ Բիւնկի ամերիկեան ծերակուտական մէջ խօսած ճառին մասին իր շնորհակալութիւններն ներկայելու առթիւ ինչ ինչ դիտողութիւններ և սպրդեցուցած է իր շնորհակալական նամակին մէջ, որու ի պատասխան Մ. Բիւնկի հետեւեալ կերպով կ'արտայայտուի իր նամակին մէջ:

Սրբիկ Պարոն,

«Ստացայ ձեր նամակը, որով ծերակուտակ մէջ թուրքերու Փոքր-Ասիոյ մէջ ունենալիք քաղաքական կեանքի մասին խօսածներս նկատի առած ըլլալով ինչ ինչ դիտողութիւններ կ'ընեք, որոնք շփոթեցանց հետաքրքրեցին զիս:

«Կարևոր և հրատարակական իրականութիւնն սա է որ անհատական, քաղաքական և սեպհականութեան իրաւունքներն՝ Փոքր-Ասիոյ ժողովուրդներու համար, պիտի պահպանուին, ապահովուին առանց ցեղի, լիզուի կամ կրօնքի խտրութեան: Եւ այս ամենքն չեն կրնար իրականանալ թրքական ընթացի տակ: Քաղաքակիրթ կամ քրիստոնեայ կառավարութիւն մը պէտք է որ օգնէ մահմեդականները նոյնպէս և քրիստոնեաներն անոնց կրօնական և անհատական իրաւունքներու պաշտպանութեամբ:

«Ասկից տարբեր լուծում մը չէ կարելի գտնել թրքական հարցին համար, հաստատել արդարութիւնն և խաղաղութիւնն քաղաքակիրթ երկրներու նման վարչական և օրինաց բռնադատութեամբ: Շնորհակալութիւններ ձեր տողերուն համար, որոնցմով կ'զնահատէք իմ բռնած գիրքս թրքական հարցի մասին»:

Անկեղծօրէն ձերը Ուելլըմ Հ. Բիւնկ

Այնպէս կ'կարծենք թէ՛ աւելորդ է մեկնութիւններու շարքը աւելցնել Հայկական Դատը, ինչպէս վերև ըսած էինք, ամենու սեպհական գառը դարձած է և Հայերն կրնան հանգիստ ըլլալ, երբ ինչպէս ամեն կողմ, նոյնպէս և ամերիկեան ծերակուտակ մէջ մէկէ աւելի պաշտպաններ արթուն կ'հրահան, որպէսզի Հայերն չանիրաւուին ու անոնց արդար պահանջումները ստանալու չըլլան:

Հ. Մ.

ԶԱՅՅԵԼՔՆԵՐ ՄԵՑ

Երրորդութիւններն հազուապէս բաներ դարձած են աշխարհի վրայ, երբեմն ալ անբացատրելի ու սնունդը ընտելի վարկածներու փոխուած են, երբ գիրկընդկառուուիլ ուղած են երկնայինով և կիսաշխարհայինով: Աշխարհ իր երրորդութիւնն ունեցաւ, ինչո՞ւ համար իր զգիւրդ և չպիտի

ունենար բացառաբար, քաղաքներու մէջ բողոքուարն հանդիսացած ըլլալով ցայսօր:

Սակայն իզմիրի երրորդութիւնն անըմբռնելի կամ անբացատրելի չէ, միտքի բաժին մը ունենալով հանդերձ:

Իզմիրի երրորդութիւնն կուզան կապել երեք Կարապետեաններ, անոնք կ'ներկայացնեն, իրարմէ անջատ, իրարու հաղորդակից, իրարմէ անկախ,

իրարու պատասխանատու, իրարմէ հեռու, իրարու հետ զօրուած, խորհրդուար յատկանշական յատկութիւններ:

Բայց աւելին կայ, այդ երրորդութեան պաշտօնն ալ ինչպէս ըսի իրարմէ անջատ, հեռու և անկախ ըլլալով հանդերձ կ'զգտի միեւնոյն նպատակին ու միեւնոյն եզրակացութեան: Մին՝ ստանձնած է ուղղելու ժողովուրդը դէպի ուղիղ ճամբան:

Միւսը՝ ազնուացներու հոգիները ու մտքերը պէտքով շարժելու այդ ճամբայէն: Երրորդը՝ յուզելու միտքի բրածոյնով անկախ հոգիները և դարձնելու զանոնք դէպի յառաջադրուած ճամբան:

Այսպէս ուրեմն երեք տարբեր զբաղումներ, երեք անջատ մարմիններ, տարբեր գողափարներով, տարբեր պաշտօններով, տարբեր ստպարէզներով, տարբեր սկզբունքներով, որ սակայն հակառակ իրենց այլազանութեան միեւնոյն մտատիպարը կ'հետապնդեն:

Ձեք գտնել թէ աւելի գործնական, շատ աւելի համոզիչ է իզմիրի երրորդութիւնը խել մը երրորդութիւններէ որոց թափանցելու համար անխուսափելիօրէն դուրս ճախեցնելու է, մինչև երկնից բարձրութիւնները, Հնդկական և Եգիպտական բազիլիկներու և բուրգերու խորքը մըն ինչու է, մինչ կեանքը արդէն կարճ է և դարը գրական...»

ԵՍ

Ժ Ա Ն Տ Ա Խ Տ Ը

Առողջապահական վարչութիւնը այս օրերս քաղաքի ամեն կողմը փակցուած ազգայնորով կուզայ անգամ մալ ուղարկութիւն հրաւիրել այն ահարկու համաճարակին վրայ որ փէթով կամ վկա և ժամտարտ անուանելով ծանօթ է հանրութեան վարչութեան այս ազդարարութիւնը աւելորդ անգամ մալ կուզայ ցուցնել թէ՛ սոյն համաճարակը կատարելագոյն վերջէ զլուտած գեռ. և առաւել կամ նուազ չափով կ'սպառնայ հանրութեան Ուստի կարծէ անգամ մալ անդրադառնալ անոր փոխացման և տարածման միջոցներուն վրայ, յուսալով որ իր գրական օգուտը կրնայ ունենալ ու մանց համար:

Ա.— Կապիկներու շատ մը տեսակները ենթակայ են ժանտախտի, հետեւաբար անոնք կրնան որոշ չափով պատճառ գտնուիլ ժանտախտի տարածման հող չէ թէ իրենց դերը այնքան մեծ արդիւնքներ չունենայ:

Բ.— Կատուներն ալ բուժական մեծ չափով կրնան վարակուիլ ժանտախտէ, և հետեւաբար տարածել ժանտախտը: Աստորալիոյ, Հարուսային Ափրիկէի, Բրիտանական Արևելեան Ափրիկէի և Հնդկաստանի կարգ մը մասերու կատուներուն մէջ պատահած դէպքերը կը բացատրեն այս կէտը:

Ստամբուլը կենդանիներէն խոզը, Հնդկաստանի չիտաուար սկիւռները և այն կարգի մեծ ու փոքր անասունները կրնան վարակուիլ վէպակ. սակայն մանր մուկերու և առնէտներու գրեթէ ամեն դիակներուն ժանտախտէ վարակուելը և ժանտախտը տարածելու մէջ անոնց ունեցած առաւելաբար լազոյն դերը ըստիւնքեան բաւական ուշագրաւ է:

րածելու մէջ անոնց ունեցած առաւելաբար լազոյն դերը ըստիւնքեան բաւական ուշագրաւ է:

Կարեւոր պարագայ մըն է նաև 'սա կէտը թէ ոչ միայն սարդը, այլ նաև մեռած մուկերու մարմինները կրնան պատճառ գտնուիլ նմանապէս համաճարակին տարածման. իսկ այն բնականաբար ըստիւնքեան մը ժանտախտը մուտ գտած է, ըլլայ վարակեալ մուկերու և կամ վարակեալ մարդոց միջոցաւ, կրնան վտանգուար գտնուիլ բաւական ժամանակի համար և կը կարոտին լուրջ մաքրութեան և հակահետախտի միջոցներու:

Կլիմայի և եղանակի ազդեցութիւնը.— ժանտախտի համաճարակը կրնայ յազգիլ որ և է եղանակի մէջ, աւստուան տաքին նաև ձմեռուան միջոցին պատահած համաճարակներու թիւը քիչ չէ, սակայն Հնդկաստանի և Ափրիկէի շատ մը մասերուն մէջ պատահած ժանտախտի համաճարակները կը ցուցունեն թէ վէպակ աւելի մեծ թափ կարող է խտանալ զարնան եղանակին և կամ աշնան զով ամիսներուն:

Այս եղանակը ուրեմն, որուն մէջ կը գտնուինք, նպատաւոր է կամ կրնայ ըլլալ ժանտախտի տարածման և ուստի հարկ է լուրջ ուշագրութիւն տանիլ կանխազգուշական միջոցներու համաճարակը իր սողմային վիճակին մէջ խեղդելու համար: Բարեբաղդաբար այդ միջոցները շատ պարզ և գիւրահասկնալի են կրնան առանց դժուարութեան գործադրուիլ ամեն դասակարգի կողմէ, ամիտիւրով զանոնք երեք կէտերու մէջ, ինչպէս նախորդ յօդուածով թելադրած էինք:

Ա.— Չզուշանալ ժանտախտէ վտարակուած կենդանիներու կամ մարդոց հետ որ և է յարաբերութիւն ունենալէ նմանապէս ամենամեծ չափով սէտք է զգուշանալ ժանտախտաւորներուն գործածած հազուադեպներէն, և այն բնականաբար ըստիւնքեան մը ժանտախտի գէպքեր պատահած են:

Բ.— Պէտք է բժամիլ զօրէն հոգ տանիլ մուտաններու, խոհանոցներու, ամբարներու և մթերանոցներու մաքրութեան, և ամեն կերպով ոչնչացնել մուկերը, ծուղակներով կամ մկան դեղերով, որ թաղապետութիւնը ձրիաբար կուտայ:

Պէտքէ նաև իր կանխազգուշական միջոց ստակած մուկերը զգուշութեամբ անհետացնել, և անոնց ծուկերը փակելով յաճախ շրջապայքը կիրով ձեւակցել:

Գ.— Վերջին և ամենակարևոր միջոց՝ պատուաստուիլ ժանտախտի պատուաստով կամ չիճուկով:

ԲԺԻԾԿ Թ. ԴԱՐՔԻՆԵԱՆ

Հ Ե Լ Վ Է Յ Ի Ս

ՀՐԳԵԼԻ ԶՈՒԻՑԵՐԻԱԿԱՆ

ԱՊՈՒՂԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հաստատուած 1861թ.

Անմիջական հասուցում վնասուց և նպատաւոր պայմաններ

Ընդհ. Երեւան-Եջեպոլ Իջիւն

ԱԻՑԻՔԵԱՆ ԵՂՐԱՐ

ՄՐ Ա. ԱՐՄԻԼ

ՀԵՆՐԻԿ ՄԱՍՏՈՒԼ
Ելեքքերոս Թիբոս ստացած է իր Պոլսոյ Թղթակցէն գրութիւն մը «Հայաստան վտանգի մէջ» վերնագրով, ուր ընդարձակօրէն կը խօսուի Հայկական հանրապետութեան ու տակաւին չծիրարկուած Տաճկահայաստանին սպառնացող թրքո-թաթարական վտանգին վրայ Թղթակցը կը գրէ ի մէջ այլոց Այս սպառնալիքը հարկադրեց հայկական կոտորածներու նախագահ Պ. Քաջազնունին որ հեռագրաւ պէտք եղած կոչն ընէ Պ. Պօլոս Նուրաթի, խնդրելով որ չհեռանան Կովկասի անպիտան ուժերը, և վիճադարարի է. յօդուածին համեմատ, գրաւորին Համաձայնութեան կողմէ Հայաստանի վեց նահանգները:

Այս գիտումէն պատ, կը շարունակէ Թղթակցը, տեղւոյս հայ մարտիներն ու կուսակցութիւնները մեծապէս յուշուած վերահաս չարիքէն ու մտցած դաւաճական խտրութիւնները, ընդհանուր նիստ գումարեցին ամենքը մէկտեղ ուղղափառ, կաթողիկոս ու թաղաքական, ընդ նախագահութեամբ պատրիարք Տ. Զաւենի, որպէս զի վտանգին առջևը առնելու ճամբայ մը գտնեն: Ինչ որ ամենէն աւելի Հայերը անհանգստութեան մատնած է, կը գրէ «Էլեքքերոս Թեթո», ալ պաշտօնական քարձած սո հաւաստումն է, որ էնվէր թրքո-թաթարական բանակներուն գրուելը կը գտնուի:

Թէյկերաֆոս հետեւեալը կը գրէ Թրակիոյ մասին լաւատեղեակ աղբիւրներէ կ'իմանանք թէ Թրակիական խնդիրը պիտի լուծուի մօտերս ի նպաստ Յունաստանի, և վիճաբանութեան նիւթը կը կազմէ միմիայն Տէտէ-Աղաճը, ուր Պուլկարներուն կարգ մը գրութիւններ պիտի շնորհուին:

Այս առթիւ պէտք է խստովանիլ թէ Ամերիկայի մէջ մամուլը մեծապէս նպաստեց պաշտօնական շրջանակներուն կարծեաց մէջ փոփոխութիւններ առաջ բերելով: Միացեալ Նահանգները այս կերպով ապացուցին իրենց հասարակական ազատութիւնը: Յոյները ասոր համար երախտագրութեամբ են:

ՓՈՒՔԻ ՄԱՍՏՈՒԼ

Մուսավար քննադատելով վերջերս Պրիւքսէլի մէջ համալսարանական մը կողմէ խօսուած այն ճառը՝ թէ պէտք է Ակադեմիական Միութենէն դուրս ձգել Գերմանացիներն ու իր վերակիցները, կը գրէ:

Այս կարգադրութիւնը խորապէս վշտացուց մեզ թուրքերս որ այնքան փափաք ունինք կրթութեան ու դաստիարակութեան տեսրուցին պատճառ եղողները անհիմար ըլլան Ազգը ինչ յանցանք ունի Սակայն պիտի դայ ժամանակը ուր պիտի հասկցուի թէ մենք անմեղ ենք: Վտանգութիւններ մեծ է արգարատէր Գրանտայիներուն և Անլիւսիցիներուն վրայ:

Քոյնիլը դարձեալ երկար խմբագրականի մը մէջ կը թուէ այն մեծ ճառայութիւնները զոր մատուցած ըլլայ թուրք տարրը Այսքնի նահանգին մէջ: Առանց թուրքին աշխատութեան այս նահանգը այսչափ չէր բարգաւաճեր, կ'ըսէ: Երբոր Իսթիլի խնդիրը մէջտեղ կը գրուի, պէտք է այս պարագան նըկատի առնուի:

Վերջին հինգ տարուան ընթացքին քանի մը ողորմելիներու ըրած շահատակութիւններն ու զուլումները պէտք է ամբողջ ազգին կոնակը բեռնել: Այդ մարդիկը բովանդակ մարդկութեան համար փորձանք, պատուաստ էին, չիկնեանէ էին:

Մեր հպատակներուն չորս հինգ տարուան շարժարանքը պէտք է մտցնէ չորս հարիւր տարուան մեր իրենց շառլած շնորհներն ու բարիքները:

ՈՐԲԱՆՈՅԸ ԳՈՒԼԵՃ ՉԷ

Մարդիկ կան որոնք չփոխեցուցած են որբանոցը և գոլէճը իրարու հետ, և կը կարծեն թէ նոյն երկու գիշերութիկ հաստատութիւնները միեւնոյն բաները են և միեւնոյն վայելքները կամ պայմանները պէտք է կ'արդուին: Կը սխալին բոլորովին. վտանգի որբանոցը ըլլալով զտտ խնամաստարական հաստատութիւն մը, նոյն վարչութիւնը կը ջանայ խնամով անտէր թշուառ մանուկները, մտուցանելու գլխաւոր գերով — սրպէսզի անօթի չիճեանին — օգտուելով միեւնոյն ատեն՝ տալով անոնց պարզ նախական դաստիարակութիւն մը, ցորչով կարելի է հասցնել ձեռք ունեցած միջոցներով:

Պէտք է գիտնալ թէ՛ որբանոց մը զուրկ է հիմնական նիւթական դրամագրութէ, և այդ հաստատութիւնները կը մատակարարուին ամեն երկիրներու մէջ ալ բարեւոյններու նոտրատակութեամբ: Բայց նոյնը չէ գոլէճը. գոլէճ մը միշտ իր դրամագրութիւն ունեցած է, որուն յենած փոռուոր գիրք մը կը ստանայ ու երկար շրջաններ կը բողբէ. մանաւանդ որ ուսանողները անպայման կերպով թոշակաւոր են, որոնց ուսուցիչը, գրագիրքը և բոլոր թուրք ծախքերը իրենցմէ կը հոսացուին. մինչդեռ որբանոցը ոչ մէկ թոշակաւոր, հապա—բայ և էրնեբու մեթալիքներով կը մատակարարուի:

Եւ խորհիլ թէ ինչ մեծ ծախքերու մանաւանդ բարոյական հոգածութեան պէտք կայ այդպէսի հաստատութիւնները կառավարելու համար: Այս մասին անուրանալի ու շնորհակալութեան արժանի մեծ հոգի մը կը ներկայանայ մեզ՝ յանձին Պրն. Ալիաուորեանի զոր քաղաքիս Ազգ. որբանոցի բարերար գերը ստանձնած է:

Մեր ժողովուրդը լաւ գիտնալու է թէ՛ առանց մեր հարուստներուն ոչինչ չենք կրնար ընել: Անաչառ ազգայիններ կը զնահատեն ու կ'որհնեն իրենց անուշը, ասոր համար իրենց հոգին թող վտանգի ու չարասիրտներու վրէլուկներուն համար չարժեք երէք վհատիլ ու զղջալ իրենց բոլոր ընձեռած մեծանձնութիւնէն:

Եւ այս իրողութեան առջև եթէ մեր ժողովուրդին անպիտակ դասակարգը կը դեղի յամառելու իր փրցուն քննադատութեան մէջ, այն ատեն կը նշանակէ թէ իրենք մտքով գինով են ու չեն գիտէր ինչ կըսեն:

Որբակները այն ատեն դժբաղդ կըլլան երբ կ'ընկնին հանգչեցնելու բարձ մը ու փորեքինի տաքցնելիք տաք ապուր մը չունենան:

Որբանոցը Գոլէճ չ'է: ՀԱՅԳ ԵՆՆԵՐԻՅԱՆ

Բարեբախտ Լուրեր

Նիւ-ԵՕՐՔ է հասած հեռագրի մը համաձայն, ամերիկեան կառավարութիւնը, իտալական կառավարութեան ծանուցած պիտի ըլլայ թէ Հոսով իր դեսպանը Մր. Նիլըն Քէյն հրաժարած է:

ՕԳՈՍՏՈՍ 26 երեքշաբթի օր, Ֆրանսական խորհրդարանը սկսաւ վերասայլի գաշնազրին վիճաբանութեանը: Այս պատճառաւ համաժողովին աշխատութիւնները երկու երեք օր պիտի ընդմիջուին, Պ. Պ. Գլեմանտի և Բիշօի ժամանակ տալու համար որպէսզի ներկայ գտնուին խորհրդարանին նիստերուն Պ. Պարթու խորհրդարանական յանձնարարութեան տեղեկագիրը պիտի կարդայ իսկ Գլեմանտ գաշնագիրին վրայ կարեւոր յատարարութիւնները պիտի ընէ: Երեսփոխ. ժողովը, նոյնպէս պիտի քուէարկէ Ազգերու ընկերակցութեան պայմանագրութիւնը և Անգլիոյ ու Ամերիկայի միջև կընդուած դաշնագրութիւնները — Հով Լիպր» կը գրէ թէ, հակառակ ընկեր-

վարականներուն ընդդիմութեան, խորհրդարանը պիտի վտարեցնէ դաշնագիրը որովհետեւ հարաւորին պայմանները տարբեր կերպով չեն կրնար ըլլալ: Կրտսած ըլլալով որ գերմանիա չէ դադրած աշխարհի խաղաղութեան վտանգ մը ըլլալէ:

ԱՆԳԼԻԱՅԱՆ թերթերը կը բարատրական ծանուցագիր մը, սրտնականներու Հոնտոնի մասնաճիւղին կողմէ՝ անգլիական գաղութներու նախարարութեան ուղղուած: Այդ ծանուցագրին մէջ կը բողբեն այն լուրի դէմ թէ, կիսրոտը պիտի տրուի Յունաստանի, և կը խնդրեն որ այս կղզին մնայ բրիտանական վիճակութեան տակ:

ՈՉ — ՊԱՇՏՈՆԱԿԱՆ տղաբերներէ կը ծանուցուի թէ Արշիդուք Ժողէֆ հունգարական գունէն հրաժարելով մեկնած է Պոտարեչէն Թան, այս առթիւ կը գրէ — Արշիդուք Ժողէֆի հրաժարման լուր թերեւս կանխահաս է. սակայն այս հրաժարումը անխուստիւիորէն պիտի տեղի ունենար, եթէ, հունգարական ներկայ կառավարութեանը Համաժողովին որոշումներուն հաղորդ ըլլար:

ՅՐՈՆԱՍԿԱՆ թերթ մը հետեւալ ծանոթութիւններն կ'հաղորդէ: Գերման թերթ մը օրեր առաջ յայտարարութիւններ ըրած է, որոնց մասին գերման մամուլը խոր լուծութիւն մը պահած է, և իրաւամբ ինթէլիգենցիա մէջ հետեւալապէս 45րդ զորաբաժնին մէջ փոխ-սպայ Պրիւսթի ստորագրութեամբ հրատարակութիւն մը եղած է որով կ'ընդգծէ Սերպիոյ Բիէր թագաւորին արժաթեղէններու բաժանման դէմ զորաբաժնին սպաններուն միջև:

Այս բողբեն վրայ փոխ-սպայ Պրիւսթ ու գերման թերթը գատի հրաւիրուած են և ստիպուած է թերթը հետեւեալ տարօրինակ հերքումը հրատարակել որ կ'ընէ 45րդ զորաբաժնին տեղակալին ստորագրութիւնը:

«Իրաւ է, կ'յայտարարէ այս սպան որ Բիէր թագաւորին արժաթեղէններ ժամանակին տրուած են զօրաբաժնին սպայակոյտին, ի փոխարէն անոր կորսնցուցած արժաթեղէններուն Ռուսական արշաւանքի պահուն: Բայց երբ այդ զորաբաժնի ցրուեցաւ Բիէր թագաւորին արժաթեղէնները բաժնուցան սպաններու մէջ իբր յիշատակ»:

Այս տարօրինակ հերքումը, փոխսպայ Պրիւսթի ստորագրութիւնները կ'հաստատուէին ներքին Հրապարակագրի մը հետեւեալ խորհրդածութիւնները:

«Դեռ ոչ չէ քննութիւն մը կատարելու այս գողութեան մասին: Որովհետեւ մեր գերման հիւպատոսին վկայութեանց համեմատ կողպտուած է նոյն իսկ գերման հիւպատոսարանը և գերման զօրաց անպատարեր են այս արարքները»:

Պերիլն է կը հեռագրեն թէ՛ նշանուոր առեւտրական ընդձովայ «Պրէմէն», որ կորսուած կը նկատուէր, յանկարծ երեւցած է Գերման Գուրբու մէջ: Անգլիացիք զայն բռնելէ յետոյ կրցան երեք տարի պահել այս նուառն նաւ սահները բոլորովին անշատելով զանոնք արեւաքին աշխարհէն, հուշատուցնելով այսպէս «Պրէմէն» կորուստը: Այնպէս որ կարելի չէ եղած անոր թմակատագրի մասին որոշ բանը իմանալ:

Բեթերվոյի պատերու վրայ փակցուած է Հէնիի հետեւալ յայտարարութիւնը, որը այնպիսի ոճով մը խմբագրուած է որ ոչ մէկ երկդիմութիւն կ'ձգէ պոլէվիքեան արարքներուն վրայ: Այս յայտարարութիւնը կարգալէ վերջ շատ զարմանալի պիտի թուէր որ, զեռ փափաքող գտնուի այսպիսի պետական կարգերու: «Սպիտակ Բանակներու դեկավարները կ'հոչուին՝ զօրավար Բոց-

եանք, զօր. Եուսէրիզ, կամ Բալէնի կամ Պէնքէնտարի, դիդ. Պաշաքովի: Այս աւարաւորներն պէտք է սպաննուին կամ ձերբակալուին ուր որ ալ ըլլան: 500000 ռուպլի նուէր կայ անոր որ պիտի յանձնէ զանոնք ողջ կամ մեռած»:

ԻՏԱԼԱԿԱՆ կառավարութիւնը կը հրատարակէ, Իտալիոյ պատերազմի ընթացքին ունեցած ծախքերուն տեղեկագիրները: Այս ծախքերը կը հասնին 58 միլիառ իտալական իրի: Չանազան թոշակներու ինչպէս նաև Լիպիոյ պատերազմին հետեւեալքով եղած ծախքերը այս թիւին մէջն են:

ՉՈՒՐԻՍԿԷ հասած հեռագրիներ կը տեղեկացնեն թէ Համպուրկի դրամատուներուն պաշտօնեաները գործադուլ հռչակած են:

ԹՕԹԻՕ է հասած հեռագիր մը կը ծանուցանէ թէ, Էարնակտի կառավարութիւնը կայտարարած է հրաժարումը մը ինքնավար հոչուած է Քօրէան:

ԱՆԻՒԼԻԱԿԱՆ հանգապարծներուն առաջարկած 7 ժամուան աշխատութիւնը քննելով հետեւեալ արդիւնքը տուած է. — օրակա 7 ժամ աշխատելով, շարաթական արտադրութիւնն 2,069,000 թօօ պիտի ըլլայ:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ թերթերը կը գրեն թէ, Գերմանիոյ մէջ գտնուած համաձայնական ինքնուշուռեայ զորագրութիւնը սկսած է Արիւնքը պիտի հատուցուի Ֆրանսական հպատակներու որոնց ինչքերը գրաւուած է Գերմանիոյ մէջ:

ԻՏԱԼԻՅՈՅ, ելուստական նախարարը Պ. Սանցեր, Բարիզ և Հօնտոն ուղևորուած է, երկու կառավարութեանց հետ կարգադրելու համար պարենաւորման հարցը, այս պարագային անոնցմէ պիտի ստանայ մասնաւորաբար ամուլի և նախնական նիւթեր: Նախարարը Հոսով դառնալով իր պաշտօնակիցներուն իրազեկ ըրած է իր բանակցութեանց արդիւնքին իտալական թերթերու տուած տեղեկութեանց համեմատ նախարարին ձեռք բերած արդիւնքը գոհացուցիչ է:

ՃԱՆՆԱԿԱՆ մասնաւոր յանձնարար մը Հոսով հասած է. այս յանձնարարութեան վատիկան երթալով, խորհրդակցած է Ճարնի նոր ստացուածներուն մէջ գտնուող կաթողիկոսներու հաստատութեանց շուրջ:

ԱՆԳԼԻՅԱՆ պարսկաստանի մէջ կնքուած դաշնագրութիւնը մեծ յուզում մը յառաջ բերած է Պոլսոյ մէջ: Քանի մը թերթեր կը ձղնին սպացուցանել թէ Թուրքիոյ համար նպատար պիտի ըլլար, եթէ պարսիկներու նման, ունենային բրիտանական պաշտպանութիւնը:

ԼՕՆՏՈՆԷ հասած հեռագրիները կը տեղեկացնեն թէ ոչ մէկ բարեւոքում կը տեսնուի ամերիկեան և մեկսիթեան յարաբերութեանց միջև: Ամերիկեան թերթերը կը պահանջեն կառավարութեան որ վերջ մը տայ մեքսիկեան իշխանութեանց գրգռիչ վերաբերումին հանդէպ ամերիկեան հպատակներու: Միմիայն, զի՛ ուրական կորովի, միջամտութիւն մը պիտի կրնար այս երկրին մէջ կարգը վերահաստատել: Անգլիական և Ֆրանսական մամուլը մեծ հետաքրքրութեամբ կը հետեւի մեքսիկեան անցքերուն:

ՀԵՂԷՆ ՊԱՐԵՆԱԿՈՐԸՆ

ՅԱՆՁՆԱԿՈՒՄԲԷՆ

Հէլլէն պարենաւորման յանձնարարէն կը ծանուցուի թէ, քաղաքիս հէլլէն բանակին եղջերապտուղի (քէշի պուլսուզ) հայթայթուած նուազուրդի արուած է Նուաղուած անգղի պիտի ունենայ օգտու. 21 (Հ. Տ) չորեքշաբթի օր (4. 11) ժամը 10 12: Նուազարդի մասնակցիլ ոճգողները կրնան մինչև որոշալ պայմաններուն մասին յանձնարարութեան տեղեկութիւն ստանալ: Տեղեկւ լԱՍՊԱՔԱՐԻՍ Իշխ. 14 Օգոստ. 1919

Ազգային Անցուդարն

Առաջ. Տեղագահ Տ. Յովհան Մ.Վ. կարգապահական երկնայացիքն է Հրէից խախտման օգնականին և արժանացած է սիրալիր ընդունելութեան մը:

— Թերևս չգիտեն մեր ընթերցողներն թէ՛ Ամերիկեան Հայ Ազգայնաց պատասխանի տեսչուհին ազնիւ Տիկին Հէյլի հաստատած է Երաժշտական ֆոնդ մը, հետզհետէ ոյժ տալու համար քրոմալուստիան՝ այդ բազմազան ազգայնացի գասեր աւանդելու համար: Այդ ֆոնդի ի նպատակ տառալին անդամ Ասփէնչըրի նաւասիրին նուիրած են 160 ոսկի, ապա Օր. Գարրիտիանի ստրքած հանդէսէն բաժին մը հանուած է 42 ոսկի, անցեալ օր Տէրաքերեանի փոքրիկ ժողովը գեանէն կ'զանէ սակ մը և լուսնալուստապարանն կ'տունէ նուիրելու համար զայն, որ երաժշտական ֆոնդի կ'յոտկացուի և վերջերս ալ Ամերիկայէ կանանց Ակումբէն զրկուած է 100 ֆրանքի նուէր մը: Տիկին Հէյլի լռիկ մննչի կ'աշխատի իրեն վստահուած գործը պատուով և վստիւղէ կերպով ի գլուխ հանելու, որով կ'արժանանայ Հայոցս ընդհանրութեան և երախտագիտութեան:

— «Կիլիկիա» օրաթերթի մէջ կարգացած էինք զինուորական բժիշկ Տօք. Թորանի գիպուածական վիտարուիլը և վերջին բաւական ծանր ըլլալը, զառով կ'տեղեկանանք թէ Տօք. Թորան հակառակ եղած խնամքներու իր ստացած վերջերէն մեռած է ի մեծ վիշտ իրեն մօտէն ծանօթ հոգեւորուն ու հայ լէգէնտականներուն, որոնք ամենամեծ գովեստով կ'օսին անոր վրայ, իբրև մարգարէ և մանուսնագ հայասէր բժիշկ:

— Ուրախութեամբ կ'արձանագրենք որ, Ա. Կ. Որբանոցի տեսչուհի տիկին Վէնէթըն որ ստիպուած էր դարձա՛նա՛տուն զիմիկի հիւանդութիւնն զարմանելու համար, ապաքինման ճամբուն մէջ մտած է ի մեծ ուրախութիւն իր բազմաթիւ հայ համակիրներուն և ծանօթներուն:

ԺԱՄԱՆՈՒՄ

Սրկարատեւ բացայտութիւնէ մը ետք ուրախութեամբ կը տեղեկանանք թէ Տիկին Յակոբ Ալիբաբ իր որդւոց և ազգական հետ վերագործած է քաղաքս: Գ. և Տ. Ս. Ալիբաբ, պատերազմէն առաջ մեկնած էին Եւրոպա իրենց զաւական գաստիրարութեան մօտէն հակելու համար և պատերազմի տարիներն անցուցած են Բարիդի մէջ. այժմ կ'իմանանք թէ վերջնականապէս վերագործած են քաղաքս հաստատուելու համար, Գ. Ալիբաբ եւս մօտերս կը հասնի Իզմիր:

Տեղագահ Լուրեր

Գեթիպի քայմաքամը կուսակալութեան ուղղուած ծանուցաբով մը պահանջած է որ Գեթիպի շրջանակին պատկանած կառավարական պաշտօնատարները որքան կորելիէ շուտ զրկուին՝ որպէսզի ընդօրոյթ սխիւն ընթացիկ գործերուն, այդ պաշտօնատարները, վերջին դէպքերուն առթիւ իր միտք եկած էին:

ՀԱՆՐԱՅԻՆ, առողջապահութեան տնօրէնութիւնը հետեւեալ կը ծանուցանելու. — Վերջին 24 ժամուան ընթացքին, իզմիրի մէջ պատահած է թիֆուսէ դէպք մը: ԿԸ ՏԵՂԵԿԱՆՈՒՄ ԹԷ, ՍԵՐՊՈՅ, խրուածքներու և լուղէներու թագաւորութեան խնամակալ իշխանը, Զինուորական Արժանիաց, պատուանշտնը նուիրած է, տեղւոյս հիւղէն կարմիր-կապտի մասնաճիւղի պետ, տեղակալ-գնդապետ Յունուքասի:

«ԷՍԹԻԱ» կը գանգատի փոսպաններէն, որոնք հացին համար քաղաքապետութեան որոշած գինն ստանալով հացերը պակաս կը կշռեն և մէն մին 30—40 տրամ տարբերու:

Թիւն մը կ'ունենայ Այս մասին ուշագրութիւնը կը հրաւիրէ քաղաքապետութեան և խաղ մը կը տեսնէ ընդմէջ փոսպաններու և քաղաքապետութեան և կամ անոր պաշտօնատեսչուն:

ՎԱՂԸ շարժի գիշեր Սիւնթիս ... մասնաշին թատրոնի մէջ, Տ. Գալիէլէա, ծանօթ երգիչ-դերասաններն, վերջին անգամ ըլլալով, իզմիրի հանրութեան տալե պիտի երգէ զանազան կտորներ և պիտի պարէ Արարական պարը, որ առկէ առաջ մեծ ընդունելութիւն գտած էր:

ՄՈՒՇԻ ԽԱՍ ԳԻՒԼԷՆ

ԱԶԱՏՈՒԹՅՆԵՐՈՒ ՅԱՆԿԸ

18.— Փառաշի տունէն, որ կը բաղկանար 17 հոգիէ, ազատուած է միայն Ղազարի կին:

19.— Հովհայ տունէն 15է, Մոսիկ, Մմբատ և իր կին:

20.— Տէր Սարգիս տունէն, 22է, Միքայէլի կին և երկու փոքր տղաները:

21.— Եղեայ տունէն, 30է, Իկոյի կին Մազուն և իր երկու զաւակները:

22.— Երրոյ տունէն, 15է, Մարգարի մայր և կին:

23.— Մուխսու Հըլոյ տունէն, 18է, Պաշկայ աղջիկ Երանուհի ու ազան Անդրանիկ, և Հըլոյ տղան Սահակ և Կարման և իր քոյր Հոտոմ:

24.— Տէր Մկրտիչ տունէն, 30է, Տիգրան, Թլեցին և իր տղան Թորգոմ, ու միւս փոքր զաւակը, Վահանի տղայ Ոսկեան:

25.— Տէր Մանուէլի տունէն 23է, Գրգոյ կին Սալմի, և իր զաւակները Ղեւոնդ, Արտու, Եղիշ, Արամ, Հոտոմ, Սմբոյ կին թագուհի:

26.— Տէր Քէրոբի տունէն, 16է, Մեարոպի կին և իր տղան:

27.— Բրոյ տունէն, 15է, Պետոյ կին, իր տղան Պողոս և անոր կին և աղան և աղջիկը:

28.— Պաշոյ տունէն, 5է, Սիմոյ աղջիկ:

29.— Սարոյ Աստուրի տունէն, 14 է, Մուշեղի կին:

30.— Մախսէ տունէն, Յակոբի կին, իր երկու զաւակները և Միկոյի կին Էֆթիկ:

31.— Ումրո տունէն, 15է Սմբատ:

32.— Մարտէ Պանոյի տունէն 27է Տօնոյ տղան և Աւագի աղջիկ Թագուհի:

33.— Աստուրի Սերոբ տունէն, 40է Սերոբի տղան Արսէն, Միկոյ տղան Արշոն, և Մալիք:

34.— Տէր Նիկոնի տունէն, 24 Սրբէ կին Զմոն և իր երկու զաւակները և Բրայ կին Հուսոմ և իր տղան:

35.— Տէր Օհանի տունէն, 10է ԴՕ հան:

36.— Շաղոյ տունէն, 26է Գրբոյ հարս և իր երեք զաւակները:

37.— Ճօփոյ Մկրոյ տունէն, 13է Մկրոյ տղան Պետրոս:

38.— Վերտոյ տունէն, 25է Մեարոպի տղան:

39.— Սեու տունէն, 17է Գրբոյ երկու զաւակներ, և Օհանի տղայ:

40.— Շողէ տունէն, 27է Պաշկայ աղջիկ:

Ս. ԱՍՏՈՒԱԹԱԾՆԱՅ ՏՕՆԸ Ի ԳՕՐՏԵԼԻՕ

Գիւղիս Ս. Աստուածածնայ կիկիցւոյ տօնախմբութիւնն ըլլալով յաւաքիկայ կիրակի օր, Առաջ. Տեղագահ Տ. Յովհան Մ. Վ. կարգապահական հանդերձեալ է Ս. Պատարագ մատուցանելու: Այս առթիւ բարեպաշտ երկսեռ հասարակութիւնը ներկայ գտնուի կը հրաւիրուի եկեղեցական արարողութեանց: Շօգնաւային իրթեկեղեցիները պիտի զերարացնէ ուխտաւորներու երթեւեկը Շարաթ օր մինչև կէս պիշեր և կիրակի մինչև սովորական ժամուան, կանոնաւոր սպասարկութիւն պիտի ըլլայ:

ԹԱՂ. ԽՈՐՀՈՐԻԴ

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Կ. Պոլիս 29 Օգոստոս 1919

ԵՐԵՎԱՆԻ ԳՍՀԼԻՃԻՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Պ. Աղեքանդր Խատիսեան հայ հանրապետութեան վարչապետ և արտաքին գործոց նախարար ընտրուած է. երեսի. ժողովին կողմէ 8ի դէմ 40 քուէով: Իսկ Գիւրգանախանի ներքին և արտաքինական, Զամախան՝ աշխատանքի, Արարատեան՝ ելեմտական և պարենաւորման, զօր. Արարատեան պատերազմական նախարար անուանուած են: Վարչապետ Աղեք. Խատիսեան խորհրդարանի մէջ ճառ մը խօսելով յայտարարած է թէ, Հայաստան իր դրացիներուն հետ բարեկամութիւն պիտի հաստատէ և պիտի պահպանէ իր սահմաններուն սահմանութիւնը:

ՀՍՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

«Նիւ Եօրք Հէրալտ կ'զրէ թէ՛ ամերիկեան պատերազմութիւնը կ'ձանուցանէ որ տնկարելի է Հայաստան զօրք զրկել առանց քոնկրէթ վաւերացման: Յրանապիք կ'իլիլիան գրաւեցին Հայերը պաշտպանելու համար:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՏՐԻԱՐԿԸ

Պողոս Նուպար, պատրիարքարան հեռագրու մը կը ծանուցանէ թէ թէ, երուսաղէմի պատրիարքը ընտրուած է:

ՋՕՐԱՎԱՐ ՀԱՐՊԸՐՏ

Ամերիկացի զօրավար Հարպըրտ սեպտեմբեր 2ին Հայաստան կը հասնի:

ԼՕՃ ԿԸ ՅԱՂԹԱՆԱԿԷ

Ամերիկեան ծերակոյտը Շանթունկը Զինաստանի տրուելու մասին Լօճի բրած առաջարկը ընդունած է և այդ ընդունելութիւնը, կը նկատուի հանրապետականներուն (Լօճ) յաղթանակներէն մին, ռամկավարներու (Ուլիսըն) վրայ: Այս որոշումը եթէ ամբողջ ծերակոյտին կողմէ ընդունուի, Ամերիկայի և ճարտի յարաբերութիւնները պիտի ձգտուին:

ՔԸՐԹԻ ԺՈՒՐՆԱԿԻ ԴՈՒՐՁ

Ֆրանսական թերթերը մեծ աղմուկով մը կը ծանուցանեն թէ, «Քըթի Ժուրնալ» նախօրէ անօրէն կ'ընէր ժիւտէ ամբաստանուած է թշնամիին հետ յարաբերութեան մտած և ի նպաստ Գերմանիոյ բրոքականա մը վարած ըլլալուն համար: Իրեն տրուած գումարը կը հասնի 2 միլիոն ֆրանքի:

ՓՕԼԵՐԱՆ ԶԻՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Բէքինէն կը ծանուցանեն թէ, Շանկէյի մէջ քոլերաի անարկու համաճարակ մը ծայր տուած է և կը ծաւալի ամբողջ Զինաստանի մէջ:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՈՐ ՕՐԷՆՔԸ

Վաշինկթընէ հասած հեռագրները կը տեղեկացնեն թէ, Մր. Ուիլսոն ամերիկեան գոնկրէին մէջ պահանջած է որ պատերազմի ընթացքին անցաւ զրերու վրայ զրուած օրէնքը շարունակուի դեռ խաղաղութեան կնքումէն վերջ մէկ տարի ետ: Այսպէսով կը յուսուցուի օտարներու դէպի Ամերիկա խուժումին առաջը առնել:

ԶՕՐ. ՄԻԼՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ներքին գործոց նախարարութիւնը Վյոնի կուսակալութեան շրջաբրահան մը զրկելով, համահեգ կուտայ որ զօր Միլնի բոլոր որոշումներու կատարելու հնազանդութիւն մը ցոյց տրուի:

ՐԱՆԻ ԿԱՐԾԻՔԸ

«Թան», ամերիկեան ծերակոյտին կացութեան վրայ խօսելով այսպէս կ'ըսէ. Շանթունկի հարցը, խաղաղութեան զաշնագրին մէջ բացուած առաջին խրամտան է, և այս հարցին պատճառ. Ֆրանսայի Անգլիոյ և Ամերիկայի միջև կնքուած դաշնագրերը կը վտանգուի և զաշնագրերը իր պարունակած պայմաններով ամերիկեան ծերակոյտին կողմէ կարելի չպիտի ըլլայ վաւերացնել տար:

ԶՕՐ. ԱԼԷՄՊԻ ԾԵՂԵԿԱԿԵՐԸ

Զօր. Ալէմպի իր կառավարութեան տուած է, Թուրքիոյ ներկայ կացուական վրայ տեղեկագիր մը:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ ՊՈԼԻՍ ԿԸ ՀԱՍՆԻ

Զօրավար Հարպըրթ և ամերիկեան լինանախուճը հասած են Պոլիս Անոն կ'ընկերանան երկու զօրավարներ:

ԱՄՏՐԻԱԿԱՆ ՀԱՐՅԸ

Աստիւոյ տրուելիք պատասխանը յանձնախումբերու կողմէ պատրաստուած և յանձնուած է Համաժողովին այդ իր կարգին աւարտ. պատուիրակութեան պետին Պ. Ռէննէրի պիտի ծանուցանէ: Պ. Ռէննէր զաշնագրերը ստորագրելու համար իրեն տրուած պայմանաժամէն օգտուելով աւարտ-զուրիցերական սահմանազուլս երթալով պիտի խորհրդակցի իր պաշտօնակիցներուն հետ և անոնց կարծիքը ստանալէ վերջ պիտի դառնայ Բարիդ:

ԹՐԱԿԻՍ ԵՒ ԹՈՒՐԿԵՐԸ

Թրակիայի Թուրքերը Պոլսոյ համաձայնական ներկայացուցիչներուն յիշատակազիր մը ներկայացնելով կը բողոքեն պաշկար խճճութիւններուն դէմ և կը խնդրեն որքանիս Թուրքիոյ մասը:

ԴԷՊԻ ՕՏԷՍՍ

Լօնտոնէն կը հեռագրեն թէ աւս կամաւորներու մէկ բանակին զօրաբաժիններէն մին օգոստ 23ին սկսած է քաղի Օտեսայի վրայ: Քաղաքին արւա ծաններու բնակիչներէն շատերը փոխաւրով խլրուած են կամաւորներու շուրջ:

ՄԵՇ ՊԱՆԳՈՎ ԵՒ ՍՈՒՍՈՒՆ

ՄԻՋՍԶԳՍՅՈՒՆ

Ք Ա Պ Ա Ս Ա Է Փ Ո Ղ Ո Ց

Բողոքական խորհուրդի քարտեզ

Յարգելի յաճախողաց ամեն տեսակ հանգստութեան միջոցները նկատի առնելով, մաքուր և նոր անկողին և մահճամալներով կահույքով, մասնաւորներու և ընտանիքներու սեռեւեալներ պատրաստուած են:

Յիմիֆար հոգևոր օգին և այլ ըմպելիքներ ու համեղ մեղեքներ, շատ պատուական թէմպլերէ կլկլակ և մաքուր սպասարկութիւն:

Ամբարներու վարձու սենեակները Պատուաւոր և գործունեայ սպասուհի մը կ'ուզուի:

Տարբերութիւն

Մ. ԲԻՐԻՆՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՏՕՔՔ Ա. Խ. ԺԱՄԱՎՈՉԵԱՆ

Վերականգնող և ակնարկող

Հիւանդներու

ԱՍԵՐԻԿԵԱՆ ՄԵՇԿԱՆ ՀԱՍՏԱՍԱՐԱՆԵՆ

ԼՈՆՏՈՆԻ ԱՐՔ. ԱՎԵՐՈՒԹ. ՀԻՆՆԻՄԱՆՈՒՅԵՆ թեթեւ ու ծանր ամէն տեսակ վիրաբուժական գործողութիւններ կ'կատարէ կանանց և այրերու:

ԱՅՔԻՎ ԿԵՐԱՐԵՐՍԱՆ

գարման մեքենա և գործողութիւններ, ինչպէս նաև գիտականօրէն սկիզբի չափեր կ'որոշէ:

Իրենց գաղտնի հիւանդներուն մասնաւոր կարգապահութիւններ:

Հիւանդներ կ'ընդունուի, բացի կիրակիէ, ամէն օր 4. ամ. 9-12 4. 5. 6. 2-5 իր քնակարանը Բէշիտի ճատէթի 40 (Պ. Պայքանի տունը):

ԹԵՆՏՈՐՈՍ ԲՍԱՄՆՈՒՏԻՍ

ՋՐԱՌՈՒԹԱԿ ԵՆ ՀԱՍՏԱՍԱՐԻՐ

ԵՒ ԲԱՂՆԻՔՆԵՐ

Ջրաբուժութիւնը մորթը կը մաքուրէ, արտաշնչութիւնը կը զիրարացնէ, արեան չըջանը կը փութացնէ և մարմնոյն անդամաւորած մասերուն այժ և առողջութիւն կը պարգևէ:

Հոգանք ծծմբային } Բիւստիֆիկի հմբ. » պարէզ }

տաք և պաղ տուը կ'իներու և այրերու համար առողջութիւն է:

Բէշիտի ճատէթի նոր փոստի դէմ Ֆրանսիացի փողոց թիւ 19-32:

Հազար Ֆրանսիացի տուժեալ պատրաստ է, եթէ հաստատել յաջողին թէ փնտասակար է առողջութեան համար տուը:

ԼՈՒԻ ՊԱՐԹՈՒԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

ԳԵՐՄԱՆ ՀԱՇՏԱՌԵԱՆ ԴԱՇՆԱԳՐԻՆ

ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՒ ՀԱՍՏԱՍԱՐԻՐՆԵՐ

1870ին, հեռագիր մը խորհրդի լուրով յաջողեցաւ, զէթ առերեւոյթ, Ֆրանսայի վրայ բեռնաւորիլ նախապարձակի գերը 1914 օգոստ. Յին, ինք իր վրայ առաւ յաջ աշխարհի և պատմութեան նախապարձակի պատասխանատուութիւնը: Ֆրանսա պատերազմի յայտարարութենէն անպարտ չ'ըլլալով, ինքզինքը զերծ կզգար որեւէ խղճահարութենէ այն անաւոր դէպքերուն մէջ որոնք առաջ բերին արիւնահեղ պատերազմը: Իր կատարութիւնը, իր հրամանատարութիւնը ծայրայեղ աստիճանի հասցուցին խոհեմութիւնն ու համբերութիւնը: Ֆրանսա, որ Սերպիոյ խորհուրդ տուած էր իր վեհապետական զգացումներուն չ'պաշտօր և է զիջումի խոնհարիլ, երբէք չ'մերժեց համաձայնութեան կամ միջնորդութեան որեւէ փորձ: Անիկայ ի դերը հանեց զերմանիոյ բոլոր գուրերը: Պատմը Շէօնի կողմէ հարցուելով թէ ինչ գիրք պիտի բռնէր զերմանիոյ և Ռուսիոյ միջ շփոթարումի մը պարա-

ՅՊԱՐԱՆ ԱՐԱՄԻՐԵԱՆԻ ԼԵՓՆՈՒԾ 1888ԻՆ
ՏՊԵՐԱՆԻՍ մէջ կը տարգրուին զրբր գրքիչներ, տնտրակներ, յայտարարութիւններ, հարսանեկան հրատարակութիւն, զեկուցատուներ ու մանագրներ են:
ՏՊԵՐԱՆԻՍ մէջ կը տպուին նամակագրութիւններ, պահարաններ, հաշուեցուցակներ, քնկարչութիւն, վերապէս վաճառատան մը վերաբերեալ ամեն տեսակ տպագրական գործեր:
ՏՊԵՐԱՆԻՍ մէջ կը տպուին տեղեկագրիչներ, երկրորդներու նամակ-հրատարարութիւններ և վերապէս տպագրական արհեստին վերաբերեալ ամեն տեսակ գործեր:
Ամեն լեզուէ: ՀԱՅԵՐԵՆ, ՖՐԱՆՍԵՐԵՆ, ԱՆԳԼԻԵՐԵՆ, ՅՈՒՆԱՐԵՆ, ՅՈՒՐԲԵՐԵՆ
ՏԵՄԱԿՆԵՐՈՒ ՊԵՏՊԻՍՈՒԹԻՒՆ ԱՄԵՆ ՏԵՄԱԿ ԳՈՒՆԵՐՈՎ
Մանր և խնամեալ գործ օրուան զինքերու վրայ
Տպարանս բաց է առատօժ միջնա իկն գիշեր
խնդրակներու համար
Վ Ժ Ա Ր Մ Ո Ւ Ն Ք Կ Ա Ն Խ Ի Կ

ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
Կրակի դեմ. NATIONAL UNION SOCIETY LTD. LONDON
CENTRAL INSURANCE CO. LTD. LONDON
Ծովային. PHOENIX ASSURANCE COMPANY LTD. LIVERPOOL
Իրենց մանրանախնդրեանց համար. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐ Լ.ԵՒ Լ. ՎԱՐՊԵՏԵԱՆ

ՊՈՂՈՍ ԿԱԿԱԶԵԱՆ
ՆՇԱՆԱԳԻՐ (ԱՆՍԵՆ)
Ամեն տեղ լեզուներով և խոսքով
նաև աղբիւրներով
Վաղածանօթ այս վարպետը տարագրութիւնէ հասած քաղաքս գործի սկսած է, թէ ճաշակատր և թէ աժան գիներով գոհացնելու պատրաստ յաճախորդները: Փափաքողք դիմեն Արգարեանի խոնութը Առաջնորդարանի դիմաց Շահին խանի կից:

ԳՆԵՆ ԱՃԱՊԱՐԵՑԻՔ
ՄՕՐԿԵՆՔԱՌԻ
ԵՒ
ԼԵՓՍՈՒԾ

ROYAL EXCHANGE ASSURANCE
ՀՐԴԵՂԻ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ընդհ. քարտեզ
C. WHITTALL et Co.
Շ. ՈՒԻԹՉՈՒ ԵՒ ԸՆԿ.

ՊՅՈՅԱԶԵԱՆ ՎԱՐՄԱՐԱՆ
ԻՐԵՐՈՒՅԻՆ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ
Շ Ր Ջ Ո Ն Յ.
Ազգային հիմնական դաստիարակութիւն, շեղուցիական եւ առեւտրական խնամեալ պատրաստութիւն (մասնաւոր հոգածութեամբ կ'ուսուցուն Ֆրանսերէն, Անգլիերէն և Յունարէն շեղուցիք):
ՎԵՐԱԲՅՈՒՄ ԶԱՌԱՋԻԿԱՅ ԴՇ (Յ ՍԵՊ.)
Պատեր կ'սկսին ճոյն օրք իսկ
Մրցորդ և ընդունելութեան պայմանները համար դիմել սնօրէնութեան, Ֆուտաթէ (Ապրահամ) փողոց, Թիւ 16:
Առատները ժամը 9-12
Դ Պ Ր Ո Ց Ա Կ Ա Ն
Նոր արտաշնչանք առթիւ, հայերէն և Ֆրանսերէն ամէն տեսակ դասագրքեր զնելու համար դիմել ԳԱՌՆԻԿ Ա. ԲԱՐՈՒՆԱԿ-ԵԱՆԻ, (51. Մեղիգ ճաւախի, Գեշեգերֆ)
Յանձնարարութիւնները կը կատարուին փութով և ճշտապահութեամբ:
Յանձնարարութեանց փոխարժէքը կանխիկ է:
Նոյն հասցիին պէտք է դիմել նաև ունենալու համար հանրածանօթ երգահան-գաշնակահար Պ. Յ. Սիմոն-Կանի բոլոր երաժշտական հրատարակութիւնները, մասնաւորապէս նոր հրատարակած Բամ Փորոսան ու Հաստաւանը:
Հատին գինն է 25 դրէ:

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԿԱՆՈՆԱՌՈՐ ԴԱՍԸՐԹԱՅԻ
ՍԿՍԵՍԻ, ՕԳՈՍՏՈՍ 15 ԷՆ.
«Ջարթօնք» կատարական. Միութիւնը կազմակերպած է Գիշերային դաստիարակութեանց շարք մը Անգլիերէն, Ֆրանսերէն, Հայերէն լեզուներու, ինչպէս նաև Թատրոն-Թատրոն-Տատրոն-Թատրոն և Իրաւաբանութեան Ծառայութիւններ խիստ զերամատչելի պայմաններով:
Հետևիլ փոփաքողներ այժմէն դիմեն Պ. Նշան վարպետանի, Եկեղեցւոյ դիմաց Պ. Կ. Պոլսականեան վաճառուներ:

գային, Պ. Վիվեանի ո՛չ թէ «տնդոնացուցիչ և պատրիպատ» պատասխան մը տուած էր, ինչպէս որակած էր Պէթման Նովիկ, այլ չափաւոր և արժանավայել պատասխան մը տուած էր, թէ ֆրանսա իր շահերէն պիտի ներշնչուէր: Կատարութեան կողմէ Ֆրանսականգորագուցողներուհրամայուիլը որ գերման սահմանադուրէն, 70 քիլօմէթր հոտ քաշուին, մեր երկրին խոզողապիրակուսն կպատակներու մասին փայլուն ասպարէզ մը կուտար աշխարհի. միեւնոյն մամանակ անկալելի կը զարձընէր այն միջադէպերը, որոնցմէ, տարակից չկայ թէ օգտուի կ'ուզէր Գերմանիա Այսքան խորաթափանց խոստովեան մը հանդէպ պատրուակ մը միայն կը մնայ՝ ստույթեան վրայ յենած: Գերմանիա երկու տուար մէկէն հնարեց:

նեղով անոնցմէ մին փորձած է շնչաբեր քանգիլ վէղէլի ժող. ուրիշներ պատրուցիկներ արձակել Քաղաքուհէի և Ներքեմպէրկի մօտ գտնուող երկուքուղիին վրայ:»
Այս իրողութիւններէն ոչ մին ապացուցուած էր. ստոնցմէ և ո՛չ մէկը ստույգ էր: Ֆրանսական կատարութիւնը հերքելով այս ինքնահնար «յարձակումները», նոյն իսկ գերմաններու տուած հերքումները կը կանխէր: 1916 Ապրիլ Յին Նուրէմպէրկի քաղաքապետական իշխանութիւնը վճռական յայտարարութիւն մը կը հրատարակէր, ծանուցանող թէ՛ պատերազմի Յրդ գործարանակին փոխարմամանտարը, որ հոն կը գտնուէր, բնաւ տեղեկութիւն չունէր՝ թէ պատերազմէն առաջ կամ վերջը որեւէ օգային յարձակում տեղի ունեցած ըլլար: Ֆրանսացի օդանաւորիներու կողմէ, և թէ այս մասին լրագրիչներու հրատարակութիւնները ամբողջովին սուտ էին: Գերման զինուորական իշխանութիւններու կողմէ արուած այս հերքումը այնքան զօրղապէս սպացուցական էր, որ գերման պատուիրակութիւնը չկրնարով որեւէ արդարացում գտնել, ցու յայտնած է որ գերման իշխանութիւնները անտոյզ իրողութեանց վրայ յենած են՝ հաւատաքի ընծայելով այսօր հրատարակու-

թիւններու Պատմութիւնը, որքան ալ անաչառ ըլլայ, չպիտի կրնար աւելի ստույգ լինու մը արձակել: Քան յայտարարական խոստովանութիւնը՝ գերման ստույթեան՝ որ պատրուակ մը ընծայիլ Գերմանիոյ՝ պատերազմ հրատարակելու համարընդգէմ Ֆրանսայի Ուրիշ ճշմարտութիւն մըն ալ կայ, այս ալ պատմութեան կը վերաբերի, որ 227րդ յօդուածէն կը բղիթ, ուր Հօհենսոյնոնեան կիցիոմ Բ., նախկին կայսր գերմանիոյ, ամբաստանուած է «գերազոյն նախատիք մ'ըրած ըլլուն համար ընդգէմ միջազգային բարոյականին և գաշնակիչներու նուիրական հեղինակութեան»: Գերմանիա կանխամտածութեամբ բռնաբարած է երկու միջազգային գաշնակիչներ, որոնց մէջ ինքն ալ պայմանագիր կողմիւն մէկն էր Գերմանիա, որ 1867 Մայիս 11ի լծուարայի գաշնակըով երաշխաւոր եղած էր Լիւքսեմպուրկի չեզոքութեան, սրդէն իսկ Օգոստ. 32ի առաւօտուն Քայր չէզոք հողամասին վրայ կը զրկէր զբարխումբեր և զըրահպատ կառայութեան, պատրուակելով թէ՛ առանց թշնամական նպատակի կուզէր պաշտպանել այն երկաթուղիի գիծերը, որոնք գերման վարչութեան տակ կը գտնուէին:

(Շարունակելի)